

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳՎՅԱՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻ ԶԱՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Տերմինի տեսության, տերմինաբանական բառապաշարի և տերմինաբանության կարգավորման հարցերը հատկապես վերջին տասնամյակներում որոշակի տեղ են զբաղեցրել հայերենագիտական ուսումնասիրություններում: Կազմվել են բազմաթիվ տերմինարաններ ու տերմինաբանական բառարաններ: Գրվել են մի շարք աշխատություններ ոչ միայն առանձին մենագրությունների, այլև գիտական հոդվածների ձևով: Այդուհանդերձ, ճյուղային տերմինաբանության շատ հարցեր դեռևս մնում են ոչ ամբողջական ձևով լուծում ստացած:

Ուշագրավ է, որ գիտության յուրաքանչյուր բնագավառի տերմինաբանություն ունի իր կազմավորման հատուկ եղանակները, անցել է զարգացման ուրույն ճանապարհ, որոնցով տարբերվում է գիտության մյուս ճյուղերի տերմինաբանությունից:

Հայերենի երաժշտական տերմինաբանությունը դարերի պատմություն ունի: Այն սկզբնավորվել է դեռևս 5-րդ դարում, երբ հունարենից, ասորերենից և այլ լեզուներից կատարված թարգմանությունների ընթացքում օտար բառերի դիմաց ստեղծվել են դրանց հայերեն համարժեքները: Այդ աշխատանքները շարունակվել են նաև հետագա դարերում: Լեզվաբանական, պատմագրական, տրամաբանական, փիլիսոփայական, ճարտասանական, այդ թվում և երաժշտական բառերն ու տերմինները ժամանակի ընթացքում լայն գործածություն են ձեռք բերել: Գրվել են բազմաթիվ աշխատություններ, որոնց հեղինակները լեզվաբանական, փիլիսոփայական մտքի խոշոր ներկայացուցիչներ էին: Փաստ է, որ հին շրջանից մեզ հասած մասնագիտական բառերի ու տերմինների մի մասն այժմ էլ ուրույն տեղ ունի հայերենի երաժշտական տերմինաբանության մեջ:

Հայ մատենագրության մեջ տաղ բառն ավանդված է 5-րդ դարի երկրորդ կեսից հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ Դիոնիսիոս Թրակացու, Փիլոն Ալեքսանդրացու, Պլատոնի աշխատությունների հայերեն թարգմանություններում՝ որպես բնագրում հանդիպող "επος, երբեմն էլ σονχος բառերի համարժեք: Գործածվել է ինչպես զրական լեզվում, այնպես էլ տվյալ դեպքում երաժշտական տերմինի նշանակությամբ, այսինքն՝ նկատի է առնվել, թե բնագրային էպոսը, որը հին հունարենում կիրառվել է տարբեր իմաստներով, տվյալ շարադրանքի մեջ ինչ իմաստ է արտահայտել:

Կայունանալով իբրև տերմին նշանակող միավոր՝ տաղը հայ մտածողների

(Դավիթ Զերական, Անանուն Սեկնիչ, Ստեփանոս Սյունեցի, Ներսես Շնորհալի, Վարդան Արևելցի, Գովհաննես Երզնկացի) երկերում ընկալվել և մեկնվել է միայն գրական նշանակությամբ՝ որպես կայուն դիքմական հատկությամբ օժտված չափածո ստեղծագործություն: Օրինակ՝ «Նախ տաղ կոչ է չափով գրեալսն», նաև՝ «Վանգիւք չափեալ բանին տաղ ասի»¹: Մեզ հասած ծեռագիր աշխատություններում տաղեր են կոչվել Գր. Նարեկացու, Ֆրիկի, Կ. Երզնկացու և այլոց վիպական-քնարական բնույթի բանաստեղծություններին չատերը:

Տերմինը՝ *ἔπος*, բացատրվում է իբրև *բառ* (слово), *խոսք*, *պատմվածք* (рассказ), *պատում* կամ *ասք* (повествование), բանաստեղծական տող, ոտանավոր²:

Ջր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» տաղը մեկնաբանվում է իբրև «երգ, քերթուած, ոտանաւոր»³, իսկ «Նոր հայկազյան բառարանում» (այսուհետև՝ ՆՀԲ)՝ *ἔπος*-ին համարժեք նշվում են նաև *Carmen, versus, melos, melodia, μετρον, metrum*։ Բան չափաբերական, ոտանաւոր երգ, քերթուած նուագելի⁴:

Տաղը մեկնաբանվում է նաև որպես ոտանավորի տող, առավելապես վեցաչափ տաղչափությամբ գրված քերթվածք, հերոսական պոեմ, դյուցազներգություն (ինչպես Գոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը»):

Անդրադառնալով տաղ տերմինին՝ Ա. Սուրադյանը մեքբերում է Փիլոնի և Պորփյուրի մեկնությունները. «Չափս եւ նուագս բազումս թողին տաղից» (Փիլ. Տեսական). «Ժողովել զամենայն տաղս հոմերականս: Բազումք տաղս ստեղծանելով, որպէս թէ Գոմերոնի իցէ » (Աճառյան Պորփյուր)⁵:

ԱՆշուշտ, հոմերական տաղ և հոմերական դյուցազներգություն հասկացությունները համարժեք չեն. վերջինիս դեպքում հասկացվում են «Իլիականն» ու «Ոդիսականը», մինչդեռ հոմերական տաղերը կամ հիմները փառաբանություններ են՝ նվիրված աստվածներին: Սա նշանակում է, որ վիպական ստեղծագործությունների և վաղ շրջանի պաշտամունքային հիմների միջև կապն ակնհայտ է:

Տաղն առնվում է նաև հազներգություն հասկացությամբ: Տերմինը հունարեն *ῥαψωδία*-ի պատճենումն է՝ բայի *ρᾶψ-* հազն հիմքից, *ωδ (h)*՝ երգ բառից և *-ια*՝ ություն վերջածանցից, և նշանակում է՝ ա) էպիկական պոեմ երգելը կամ ընթերցելը, բ) էպիկական բնույթի պոեմ կամ Գոմերոսի քերթված, գ) էպիկական պոեմից հատված, որը կատարվել է հազներգուի կողմից:

Ի դեպ, *հազներգող* տերմինը հունաբան հեղինակները պատճենել են *ῥαψωδός*-ից, որը նշանակում է *երգ երգող*՝ կցկցող, միացնող, այսինքն՝ էպիկական բանաստեղծություններ քերթող երաժիշտ կամ ասմունքող:

Անդրադառնալով հունաբան դպրոցի քերականական տերմինաբանությանը՝ Ա. Սուրադյանը նշում է, որ ինչպես հունարենում, այնպես էլ հայերենում այդ բառին տվել են տարբեր մեկնություններ. ոմանք այն բխցրել են հուն. *ρ᾿οῖδος*՝ զավագան բառից և մեկնել *զավագաներգություն*, ոմանք՝ հուն. *ρ᾿αῖτος*՝ կարեն, կարկատեն բայից մեկնել *կարակատերգություն*, մյուսները՝ ազուցել կամ հազազ բառ-տերմիններից, կամ էլ *հազնի* կոչվող անուշահոտ փայտից: Նշված մեկնություններն ամփոփել է Երզնկացին՝ գրելով հետևյալը.

«Հազներգութիւն ըստ հոռոմին լսի զաւագաներգութիւն. կամ ի հազներկոյ կարկատուն բանս. կամ է հազներգութիւն՝ ելք շնչոյ հազագին, զոր երաժշտականությամբ նուագեն ի տաղս պարանցիկ երգոցն. կամ ի հագուցանելոյ ընդ միմեանս, եւ կարակատելով բանս՝ յիրեարս յեռել. կամ հազին փայտ է անուշահոտ, որպէս սարդենին՝ որով երգէին»⁶: Այսպիսով *հազներգութիւն* տերմինը, ի թիվս տարբեր կարգի բացատրութիւնների, ունեցել է նաև տաղ, վեպ, հատուկ քերթուած (Յոմերոսի) իմաստները⁷: Կարելի է եզրակացնել, որ *Յոմերոսի քերթված* և *հոմերական հիմն* հասկացութիւնները հոմանիշներ են, քանի որ ըստ հին հունական գրականության պատմության՝ այդներին փոխարինելու եկած ռապսոդները հաճախ էին անդրադառնում հատկապէս հոմերական հիմներին՝ դրանք կիրառելով իբրև իրենց ելույթների նախերգանք⁸: Այլ կերպ ասած՝ *էպոս-տաղը* նաև օրհներգ է, հիմն: Բացի այդ, ինչպէս արդեն նշվել է, հունարեն *հազներգութիւն* տերմինի փոխարեն հայերենում կիրառվել է երկու հասկացութիւն՝ *վեպ* կամ *վիպերգ* և *տաղ*:

Հունարենում վեպը կամ դյուցազնավեպը ևս արտահայտվում է *επος* տերմինով:

ՆԻԲ-ում նշված են լատիներեն համարժեքները՝ *verbum, carmen, fama, historia*⁹:

Հայկական հին էպոսի գոյությանն անդրադարձել է Մ. Էմինը «Վեպը հնոյն Հայաստանի» աշխատության մեջ. «Վեպ... առ հինսն մեր գնոյն նշանակէր, զոր առ Յոյնս էպոս, այսինքն պատմութիւն քերթողական կամ պատմական բանաստեղծութիւն... յորում զգործս քաջաց եւ թագաւորաց երգէին», այնուհետև հավելում է. «Վեպն հնուց ոչ այլ ինչ էր, բայց եթէ քերթողական պատմութիւն չափաբերական»¹⁰: Հետաքրքիր է, որ Դ. Ալիշանը ևս, «Ազգային մատենագրութիւն» հոդվածում, անդրադառնալով *հորենացու վիպերգերին*, դրանք բնորոշում է *վեպ* և *վիպասանութիւն* տերմիններով¹¹: Անշուշտ, *էպոս* հասկացութիւնը ներկայիս ընկալւում չուներ, նշանակում էր *վիպական ստեղծագործութիւն*, *վիպերգ* («Հայկ և Բե», «Արտաշես և Արտավազդ», «Տիգրան և Ածղահակ»): Ի դեպ, *հորենացին* էլ *վեպ* բառը Պատմության մեջ գործածել է ընդամենը երկու անգամ և երկու անգամ էլ պատմական-վիպական երգի նշանակւթյամբ: «Հոմերական ճաշակ ու արվեստ է երևում հենց Տիգրանի վեպի մեջ»,— գրում է զերմանացի հայագետ Ֆեթերը¹²: *էպոս* տերմինի համեմատությամբ *տաղն* ավելի նեղ, կոնկրետացված իմաստ է արտահայտում: Այս առումով հարկ է նշել, որ ՆԻԲ-ում տաղին համարժեք նշված են նաև արևելյան ծագման *շէր, դագել, ճելա, պէթ* անվանումները: Այսպիսով՝ թե վեպը և թե տաղը, անշուշտ, ունեն ընդհանուր ակունքներ, մինչդեռ կողք կողքի կիրառվելով՝ դրսևորվում են իբրև առանձին ժանրեր: Այդ ժանրերը չենք կարող ընկալել արդի իմաստով և գեղագիտական դրսևորումներով, որովհետև հին գրական ժանրային համակարգում նրանք ենթադասված են մեկը մյուսին և «իրավահավասար» չեն:

Այսպէս՝ Արիստոտելը «Պոետիկայում» գրական տեսակների, ենթատեսակների ներքին բաժանումների համակարգում Արիստոտելն առանձնացրել է նաև էպոսը.— նշել է նա,— պետք է ունենա նույն տեսակները, ինչպիսին ունի տրագեդիան: էպոսը, ինչպէս տրագեդիան, լինում է պարզ կամ հյուսված, բարոյախոսական, պոետիկ: Նրա բաղկացուցիչ մասերը, բացառությամբ երաժշտության և թատրոնականության, նույնն են»¹³:

Ընդհանրապես Արիստոտելի ձևակերպումներում էպոսը չափածո խոսք է, ոչ էլ երգվող ոտանավոր: Այն հին հունական մշակույթի դասակարգման համակարգում որոշակի նշանակություն ունեցող, կոնկրետ բաժանում և տարբերակում մատնանշող տերմին է՝

Գրեթե նույն միտքն է արժարժում նաև Թրակացին: «Քերականական արվեստի» «Վերծանություն ներկուս ըստ առողանութեան» բաժնում նա վերծանության նպատակն է համարում արձակ և չափածո երկերի «հառաջընթացությունը» և նշում յուրաքանչյուր ժանրի ստեղծագործության ընթերցանության ժամանակ ծայրի համապատասխան եղանակի կիրառումը.

« Զի զողբերգութիւնն դիւցազնաբար վերծանեսցուք,

Իսկ զկատակերգութիւնն աշխարհաւրեն:

Եւ զդամբանական ուժգնակի,

Եւ զտաղն քաջուորակի,

Եւ զքնարական քերդութիւն ներդաշնակապէս,

Եւ զխանդաղատականն թուլակի և աշխարապէս»¹⁴:

Թրակացու երկի նշված հատվածը միաժամանակ տեղեկություններ է տալիս հայկական միջավայրում նշված գրական ժանրերի գործածության մասին:

«Այսպես, օրինակ, իմանում ենք, — գրում է Գ. Ջահուկյանը, — որ կատակերգությունը հայ մամիկ դասի սիրելի ժանրն է եղել, որտեղ ծաղրվել են ծուլները, ընչասերները և ուրիշները, ողբերգությունը հայերի մոտ հանդես է եկել որպես մեռելների վրա կատարած սուգ ու լալիք, իսկ զուսանական տաղերը շատ սիրված ու հարգված են եղել»¹⁵: Նշանակում է, որ նրանց կիրառության ոլորտները տարբեր են. մի մասը համեմատաբար սահմանափակ գործածություն ունի, մյուսներն՝ առավել լայն:

Տաղի՝ *եղանակավոր երգ* անվանումը նս հին ծագում ունի: Կոմիտասը նշում է նրա եկեղեցական նշանակությունը՝ գրելով, թե «հանդիսավոր ժամերգության պահանջով ձևավորված ժանրերից է սա»¹⁶: Այնուհետև անդրադառնալով տաղերի սկզբնավորման ժամանակաշրջանին՝ վկայում է Խորենացու հիշատակությունը հոգևոր տաղերի մասին և ըստ այդմ էլ ծագումը վերագրում 5-րդ դարին¹⁷: Մինչդեռ կարելի է ենթադրել, որ ի տարբերություն այլ ժանրերի, տաղերն ավելի խոր ակունքներ ունեն: Այսպես՝ 5-րդ դարում սաղմոսերգությանը փոխարինելու եկած հայկական հոգևոր երգերն այնքան կատարյալ էին, որ, անշուշտ, պետք է ունենային զարգացման հարյուրամյակների պատմություն: Այդ է վկայում հատկապես շարականների զարգացման պատմությունը:

Իսկ ո՞ր դարին վերագրել տաղերի աշխարհիկ դրսևորումները: Կոմիտասը ենթադրում է, որ մեր եկեղեցում սաղմոսերգությունը կատարվում էր «հին ժողովրդական եղանակներով»¹⁸: Բացի այդ, հոգևոր երգերի և ժողովրդական երաժշտության միջև եղած ընդհանրությունները բազմաթիվ են, ավելին՝ ժողովրդական երգի զարգացումը չի բաժանվում քրիստոնեական և մինչքրիստոնեական փուլերի:

Ինչպես հայտնի է, ընդունված է տաղերի զարգացումը վերագրել 10-րդ դարին՝ նկատի ունենալով հատկապես Գր. Նարեկացու ստեղծագործական

ծառանգությունը: Այնուհանդերձ, իբրև ժանր ծնավորված տաղերի ակունքները վիպական ոլորտում են և սկզբնավորվել են դեռևս հնագույն պաշտամունքային շերտերից: Այդ է վկայում նաև Գ. Դովսեփյանը. «Գրիգոր Նարեկացին իւր տաղերով եւ զանձերով, Մագիստրոս, Սյոթթար Գոշ, Շնորհալի եւ մանաւանդ միջնադարեան երգիչները արժանի են առանձին ուշադրութեան ժողովրդական բանահիւսութեան տեսակետով: Ժողովրդի վարքի ու բարքի, սովորութիւնների, սնոտիսպաշտութեան (ընդգծումը մերն է՝ Գ. Ս.) ուսումնասիրութեան համար ընտիր աղբիւր են նաև մինչ այժմ բոլորովին անտես արուած քաղոցները:

Ուրիշ ազգերի մատենագիտութեան մէջ եւս հազուադէպ չեն նման երևոյթներ, ֆրանսացւոց Բուլանդի երգը, գերմանացոց Նիբելունգները, պարսից Շահնամէն ժողովրդական վէպեր են, որ յետոյ գրի են առնուել ու մշակուել բանաստեղծների ձեռքով: Զարմանալի չէ ուրեմն, եթէ ժողովրդական ներկայի բանահիւսութեան հետքեր որոնենք միջնադարեան տաղարաններում»¹⁹:

Յեղինակի հիշատակած *սնոտիսպաշտություն* տերմինը պիտի հնագույն պաշտամունքային մնացուկների դրսևորում լինի: Իսկ նման երևույթն, ինչ խոսք, պատահական բնույթ կրել չէր կարող:

Այսպիսով Դ. Թրակացու արտահայտությունը՝ «եւ զքնարական քերթութիւն ներդաշնակապէս», Ստ. Սյունեցին մեկնում է. «Այսինքն զգուսանական դայլայլիկսն»՝ հոգևոր երգերին վերագրելով աշխարհիկ արվեստի սկզբունքներ»²⁰:

Մենք հակված ենք կարծելու, որ էպոսը կամ վիպասանությունը պատկանում է գուսանական արվեստին: Լեոն գրում է. «Վեպ պատմելն ու ներկայացնելը որոշ զբաղմունքի, արհեստի է վերածվում: Այդ զբաղմունքի տեր մարդկանց անվանում էին գուսան»²¹, իսկ «վիպական բանաստեղծությունը մշակվել է պրոֆեսիոնալ արվեստագետների ձեռքով, որոնք կոչվել են երգիչ, վիպասան և գուսան»²²:

Տերմինների (էպոս, վեպ, տաղ) բազմիմաստությունն ակնհայտ է: Պատճառն այն է, որ լեզվական հասկացությունները դեռևս չեն մասնավորվել իբրև տերմին. նրանց իմաստը ճշգրտված, սահմանազատված չէ մյուս իմաստներից: Օրինակ՝ նշելով *երգ* բառի բազմիմաստությունն ըստ ՆԴԲ-ի (նուագ ծայրի. բան երաժշտական. օրհնաբանութիւն. զովեստ. շարական. տաղ)՝ Լ. Դովհաննիսյանը նկատում է, որ «հետդասական շրջանի ինքնուրույն գրականության մեջ տաղի գործածությունը այնքան էլ հաճախական չէ... Նրա գործածական շրջանակներն ընդլայնվել են միջինհայերենյան շրջանից»²³: Այսինքն՝ տերմինների իմաստը թե՛ օտար լեզուներում և թե՛ հայերենում դեռևս որոշակիորեն տարբերակված, կոնկրետացած չի եղել, որպեսզի հնարավոր լիներ ընտրել հասկացության հիմնական հատկանիշը և դրանով պայմանավորել տերմինակազմությունը: Այդ պատճառով էլ նույն տերմինն արտահայտել է մեկից ավելի իմաստներ:

Այսպիսով վիպերգերի և տաղերի ակունքների ընդհանրությունն ակնհայտ է և պայմանավորված է ինչպես միջնադարյան քնարերգության նմուշներով, այնպես էլ քնարական երկերում մշակված դրույթներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննես Երզնկացի (Շորժորեցի), Համառոտ տեսութիւն քերականին, Մատ. ձեռ., 9992, էջ 11ա:
2. И. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. 1, М., 1958, с. 652.
3. Հր. Սճադյան, Հայերեն արձատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 362:
4. Գ. Աւետիբեան, Խ. Սիրմէեան, Ս. Ազեբեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 839:
5. Ա. Սուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 161:
6. Հովհաննես Երզնկացի (Շորժորեցի), նշվ. ձեռ., էջ 12բ:
7. Ա. Սուրադյան, նշվ. աշխ., էջ 162:
8. Ա. Առաքելյան, Հունական գրականության պատմություն, Երևան, 1968, էջ 67:
9. ԵՅԲ, հ. 2, էջ 839:
10. Н. О. Эмин, Исследования и статьи, М., 1898, с. 92.
11. Ղ. Ալիշան, Ազգային մատենագրութիւն, «Բազմավեպ», 1850, դեկտեմբեր, N 1:
12. Պ. Ֆեթեր, Հայկական աշխատասիրութիւնք, Վիննա, 1895, էջ 120:
13. Արիստոտել, Պոետիկա, Երևան, 1955, էջ 149:
14. Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 191.
15. Գ. Ջահուկյան, Զերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 185:
16. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 106:
17. Կոմիտաս, նույն տեղում:
18. Կոմիտաս, նույն տեղում:
19. Գ. Հովսեփյան, ժողովրդական բանահիւրարեան հետքեր միջնադարեան տաղաբաններում, «Արարատ», թ. 11-12, Վաղարշապատ, 1898, էջ 544:
20. Н. Адонц, Указ. соч, с. 193.
21. Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 81:
22. Լեո, նույն տեղում:
23. Լ. Հովհաննիսյան, Երաժշտություն իմաստային խմբի բառերը գրաբարում: Ջահուկյանական ընթերցումներ, 2007, Երևան, 2007, էջ 104:

Դ. Մխитарյան

К ВОПРОСУ ОБ ИСПОЛЬЗОВАНИИ НЕКОТОРЫХ ТЕРМИНОВ В ОБЛАСТИ МУЗЫКИ И ЛИТЕРАТУРЫ

В Армянской летописи есть термин "tag". Этот термин впервые был введен еще во второй половине пятого века представителями грекофильской школы. Первоначально термин был создан как эквивалент слова "эпос", а также термина "музыкальное понятие". В дальнейшем, в произведениях некоторых авторов (Давида Керакана, Анануна Мекнича, Степаноса Сюнеци, Нерсеса Шнорали, Вардана Аревелци, Ованеса Ерэнкаци) он употреблялся как литературоведческий термин: стихотворное произведение с устойчивой рифмикой. Позже лирические произведения многих авторов стали называться "tag". Термин "эпос" толковался как "слово", "рассказ", "сказание", "стихотворение". Слово "tag" толкуется также как "строфа", "метрическое произведение",

“эпоса” (Гомер — “Илиада”, “Одиссея”). “Таг” соотносим и с понятием “рапсодия”. Этот термин, наряду с другими объяснениями, имеет значения “таг”, “сказание”, “гомеровая строфа”. Значение термина “таг”, в отличие от “эпос”, является более узким и конкретным. “Роман” и “таг”, имея общие истоки, проявляются как отдельные жанры.

G. Mkhitryan

ON THE USAGE OF SOME FORMS IN THE SPHERE OF LITERATURE AND MUSIC

In Armenian cronicle there is a term “tagh”. This form first appeared in the 2nd half in the 5th century by the representatives of Hellenophile school. Originally the term was consider as a synonym to the word “epos” (narrative literature). This meant a musical term as well. Subsequently, in the creations of David Kerakan, Ananun Meknich, the word acquired only one literary meaning. It meant a poetical creation with steady rhythmical arrangement. Later in lyrical works of many authors were named “Thags”. The interpretations of the word “epos” was “a word”, “a story”, “a poem”, “a legend”. The word “tagh” also is explained as “a metre”, or “metrical pattern”, or Iheroic poeml (Homer — “Illiad”, “Odyssey”). “Tagh” has some similarities with “rhapsodia”. This term besides the other explanations also has the meanings “tagh”, “novel”, “homeric verses”. Unlike Ieposl the word “tagh” has a narrower and concrete meaning. Though the words Itaghl and Inovell have the same origin, they are of different genres.